UN TÉMOIGNAGE ARMÉNIEN ANONYME

SUR LA SITUATION POLITIQUE DE L'EMPIRE OTTOMAN DURANT L'ÉTÉ DE 1703

Les révoltes de janissaires contre le pouvoir des sultans ottomans ont eu, dans les siècles passés, un caractère véritablement cyclique et sont, pour ainsi dire, rentrées dans la tradition historique de la Turquie. «Coup d'état» ou soulèvements armés, elles finissaient bien souvent par la destitution du sultan, auquel on substituait un autre monarque, ou, dans les cas moins aigus, par un changement de grand vizir. Il apparait cependant que ces révoltes n'avaient pas un caractère populaire, mais étaient plutôt le fait des forces armées.

Dans le cas qui nous occupe — la révolte de juillet-août 1703 —, on remarque, à travers le texte arménien le concernant, que ce conflit, tout en étant dans la tradition du temps, a pris une tournure populaire et que son initiateur était, pour l'occasion, le corps des *cepecis* (textuellement «armuriers»), pourtant bien peu considéré eu égard aux autres armées impériales. On constatera également, en lisant l'*Histoire* publiée ci-après, que l'acteur principal de cette révolte, celui contre lequel se catalisa le feu de l'insurrection, l'abcès de fixation de cette affaire, le *şeyh ul-islâm* Feyzullah efendi, était Kizilbaş: origine qui irrita les dignitaires religieux et militaires de l'Empire, qui acceptaient mal la nomination d'un chiite aux plus hautes fonctions cléricales de l'état. D'autant que le rôle politique du mufti était loin d'être négligeable, puisqu'il avait le pouvoir de trancher les affaires litigieuses au moyen d'un *fetva*, par lequel il donnait une sentence officiellement en conformité avec les préceptes du Coran.

Outre l'intérêt historique évident de la présente chronique pour mieux comprendre les mécanismes et le phénomène d'entraînement d'une telle révolte, avec des anecdotes et des détails particulièrement significatifs sur les mœurs politiques de l'époque chez le Grand Turc, on est également frappé, à sa lecture, par l'angle de vue adopté par l'auteur arménien en rédigeant son *Histoire*. Il est ainsi significatif de le voir parler de ces évènements avec un certain détachement, comme s'il s'agissait de faits ne le concernant que de loin, lui et sa communauté. Grâce à quoi, on en arrive aussi à se faire une idée assez précise de l'état d'esprit des chrétiens de l'Empire quant au pouvoir : il est manifeste qu'ils n'y avaient pas leur place, tout en étant des observateurs attentifs de la vie publique.

A travers la description des mouvements de corps d'armée et des alliances se nouant au fur et à mesure de l'évolution du conflit, on perçoit également toute la tradition militaire sur laquelle repose la puissance du pays, et notamment le rôle clef des quatre corps de janissaires — turbulants, mais vaillants —, qui font décisivement pencher la balance du côté des insurgés, lors de la phase ultime du conflit. Ailleurs, l'auteur chrétien montre bien les précautions que prennent les révoltés avant de quitter Constantinople. Ainsi, ils préfèrent se priver d'un nombre substanciel de soldats, dont ils ont pourtant cruellement besoin pour s'attaquer aux 300.000 hommes de l'armée loyaliste, plutôt que de laisser la capitale sans défenses face à d'éventuels rebelles chrétiens — Grecs ou Arméniens. Mieux encore, ils font décréter une collecte obligatoire des armes détenues par les chrétiens et les juifs, en prétextant du manque d'armes des troupes insurgées, allant jusqu'à retirer celles-ci aux juifs — considérés comme inoffensifs ou fidèles —, pour éviter de montrer au grand jour leur crainte d'une révolte chrétienne contre eux pendant leur absence. Enfin, dernière mesure préventive, le patriarche grec est pris en otage et comme garant du calme de ses fidèles : ce qui permet logiquement de dire que les Grecs représentaient, dans l'esprit des Ottomans, un plus grand danger que les Arméniens de Constantinople, éloignés de leur patrie.

Une partie de la chronique est également consacrée à la personnalité du mufti Feyzullah Efendi, auquel l'auteur attribue des pouvoirs surnaturels et maléfiques, de même que le faisaient ses contemporains. Outre les accusations de sorcellerie, on y insiste aussi sur sa cruauté et surtout sur l'emprise qu'il avait

R.A.R.@

acquise sur le sultan et sa mère (traditionnellement influente au Sérail). En séparant le grain de l'ivraie, en décriptant, à travers les jugements de valeur du temps, les descriptions du caractère du Kizilbaş Feyzullah Efendi, on peut en arriver au constat suivant: il est manifeste que ce mufti d'origine chiite avait une forte personnalité, qu'il avait su momentanément imposer à tout l'appareil d'état ottoman et aux vizirs, tout à sa dévotion; que ses fonctions de précepteur des enfants de la famille impériale, et notamment du futur sultan Mustafa II, l'avaient familiarisé avec la vie et les intrigues du Sérail et lui avaient permis de connaître son personnel politique et ses mœurs. Il reste cependant un point sur lequel on peut se demander dans quelle mesure les accusations qu'on portait contre Feyzullah Efendi étaient justifiées, à savoir l'influence effective de ses origines chiites sur sa politique à la tête de l'état ottoman. Peut-on en effet concevoir qu'un empire pareil, au sein duquel les fonctionnaires étaient blanchis sous le harnais avant d'accéder aux plus hautes fonctions, ait laissé s'infiltrer dans son appareil d'état une sorte d'ennemi potentiel susceptible de trahir le pays au profit de la Perse chiite hostile, sans avoir la certitude et la preuve de sa volonté effective à défendre les intérêts de l'Empire? Evolution qu'on trouve sans conteste chez les chrétiens qui servaient la puissance ottomane, après s'être convertis pour la plupart à l'islam. Pour notre part, nous serions porté à croire qu'à travers cette accusation de chiisme persan les opposants politiques du mufti Feyzullah recherchaient plutôt un angle d'attaque destiné à obtenir sa destitution.

Et même si le présent texte montre apparemment que le sultan et son mufti étaient dans cette affaire politiquement isolés, les chiffres qui y sont cités — 70 à 103 mille rebelles contre 300 mille loyalistes — parlent avec éloquence et apportent un démenti formel à ce jugement: le sultant ne soutenait pas son mufti seul et contre tous, mais bien avec une écrasante majorité des troupes ottomanes, et ne le lâcha partiellement que lorsque la révolte prit un caractère plus général, afin d'éviter une éventuelle confrontation directe, gagner du temps et soudoyer, autant que faire se peut, une partie des chefs révoltés, pour les détacher de l'alliance réunie contre lui à cette occasion.

Pour résumer en quelques mots l'impression générale qui ressort de la lecture critique de cette *Histoire*, on peut dire que Feyzullah Efendi servit de «bouc émissaire», en tant que Kizil-

baş, aussi bien qu'en qualité de protecteur du sultan. Car, à travers lui, il apparait évident qu'on visait Mustafa II, considéré par certains comme le responsable de l'humiliant traité de Karlowitz (1699), qui priva la Turquie d'une bonne partie de ses possessions européennes: premier mouvement de recul territorial significatif sur ce continent. Chez certains dignitaires de l'Empire, s'attaquer de front au sultan, calife de l'islam, dépositaire d'un pouvoir quasi divin, n'était peut-être guère concevable, mais le destituer en prétextant de son soutien et de sa soumission à un «sorcier Kizilbaş» devenait possible. Ainsi s'ouvrait la possibilité de remettre en place un pouvoir fort, officiellement dirigé par le frère de Mustafa II, Ahmet III (1673-1736), qui resterait redevable aux forces armées de son élévation sur le trône et par là-même devrait leur céder une partie de ses prérogatives royales. Vue sous cet angle, la révolte des trente ou quarante *cepecis* de la place At (At Meydan), relayée par les *muhezzins* qui — remarquons-le au passage — servaient de courroie de transmission pour diffuser les slogans des rebelles dans toute la ville, n'apparait plus que comme un «coup monté», une opération orchestrée par quelques dignitaires politiques, militaires et religieux (le rôle des *muhezzins* tendrait à le prouver), pour liquider le pouvoir en place. Quoi qu'il en soit, la chronique de l'auteur anonyme témoigne du fait que ses contemporains, comme lui-même dans la dernière partie de son travail, ont véritablement cru à l'authenticité des accusations portées contre le mufti et à l'origine effective de la révolte chez les *cepecis*.

* * *

Ecrite sur le vif par un témoin des évènements, moins d'un an après les faits (au plus tard en avril 1704), l'*Histoire des Ottomans qui se sont révoltés contre leur souverain Mustafa II* est un modèle du genre, où l'auteur tente d'expliquer pourquoi, quand et comment se produisit cette insurrection. Redigée en arménien classique, elle était surtout destinée aux Arméniens de Constantinople, et peut-être même était-elle une sorte de rapport adressé à une autorité religieuse, ou plus simplement un témoignage de contemporain destiné à l'édification des générations futures.

L'auteur anonyme de ce travail était sans conteste un prêtre de Constantinople aux sympathies catholiques. En effet, bien que

R.A.R.@

ce que nous affirmons ici n'apparait pas explicitement dans l'*Histoire des Ottomans...*, en revanche le contenu de la chronique suivante (ff 18r°-52v°) — *Du conflit entre Arméniens et catholiques...* —, insérée dans le même manuscrit et rédigée dans le même style par un seul et même auteur[1], ne laisse planer aucun doute à ce sujet: les détails précis que l'auteur y donne sur la vie politique et religieuse de la communauté arménienne de la capitale; ses jugements très critiques et polémiques à l'égard du patriarche Awetik' Ier Ewdokiac'i, qui est alors considéré comme le champion du parti anticatholique; les innombrables références aux Saintes-Ecritures et à la littérature arménienne du moyen âge qu'il y insère pour justifier ou infirmer tel ou tel acte, etc., sont autant d'éléments qui confirment son appartenance au clergé catholique arménien de Constantinople.

La question de son identification reste cependant posée. Pour y répondre, ou essayer, nous pouvons passer en revue le milieu catholique arménien de Constantinople, résidant dans la capitale entre 1701 et 1703/4 — période au cours de laquelle se déroulent les évènements relatés dans les deux chroniques —, en tentant de déterminer quels sont les auteurs potentiels d'un tel travail. Dans un article paru en 1981[2], nous avions décrit la situation politique et religieuse de ce milieu et évoqué le nom de ses quatre chefs les plus en vue, tous auteurs ou éditeurs de livres. Mais trois des quatre *vardapets* (théologiens) concernés, Mxit'ar Sebastac'i, Petros T'iflizec'i et Xač'atur Ałak'elean, quittèrent précipitamment Constantinople à la fin de 1701, après la première persécution contre les catholiques organisée par le patriarche arménien; ce qui nous amène à les éliminer de la liste des auteurs potentiels de ces deux chroniques (leur présence en Europe entre 1702 et 1704 étant attestée). Reste donc le cas du quatrième, Sargis Ewdokiac'i, qui resta pour sa part à Constantinople jusqu'en 1714, étant à la fois évêque, éditeur et conseiller-traducteur de l'ambassade de France dirigée alors par le marquis de Ferriol. En principe, rien ne nous empêche de suggérer qu'il est peut-être l'auteur en question. Cependant, malgré sa qualité d'éditeur

1. Dans l'introduction de la seconde chronique, l'auteur fait une allusion directe au texte précédent, en indiquant qu'il s'est «*également engagé à écrire cette histoire, après la première*».
2. «Le conflit entre Arméniens et catholiques à Constantinople...», REArm. n. s. XV, pp. 401-411.

digitised by

il ne semble pas, à notre connaissance, qu'il ait publié une de ses œuvres, ni même qu'il en ait écrit[3]; ce qui joue un peu en sa défaveur.

Les quatre principaux théologiens catholiques éliminés — ou presque —, il nous reste à sonder le milieu plus large des prêtres mariés (*k'ahanas*) de Constantinople. Mais au sein de ce milieu, seul le P. Komitas K'ēōmiwrčean (1656-1707)[4] était alors connu comme ayant des sympathies catholiques. Sa personnalité prêche en sa faveur et, en dernier ressort, c'est encore celui qui apparait avoir été le mieux placé pour rédiger de telles chroniques. Il est en effet issu d'un milieu de lettrés — son frère aîné Eremia Č'ēlēpi († 1695) est le célèbre auteur d'ouvrages réputés d'histoire et de géographie, poète et confident des patriarches de Constantinople et des Catholicos d'Arménie[5] —; il était en son temps très introduit, grâce à son frère, dans les milieux les mieux informés de la capitale; il avait le goût de l'écriture et il publia un livre à succès, en 1704, chez l'éditeur Sargis Ewdokiac'i. Cette dernière hypothèse, bien que séduisante, est cependant à prendre avec circonspection, dans la mesure ou nous n'avons aucune preuve décisive pour l'étayer, en dehors du système d'élimination.

* * *

Pour résumer, à partir du document ci-après, les principales phases de la révolte qui se produisit durant l'été de 1703, nous donnons ici la chronologie des évènements:

— Le mardi 6 juillet les *cepecis* se rassemblent At Meydan, dans les environs de l'église de Sainte Sophie, et entament leur premier mouvement de protestation, qui s'étend de jour en jour.

— Le dimanche 18 juillet le sultan est informé de la situation, qu'on lui cachait jusque là, et envoie un espion à Constantinople pour juger de l'évolution du mouvement de révolte.

3. *Ibidem*, pp. 412-420.
4. Cf. RIONDEL H., *Une page tragique de l'histoire religieuse du Levant: le bienheureux Gomitas de Constantinople, prêtre arménien martyr (1656/1707)*, Paris, 1929.
5. Cf. AKINEAN N., *Eremia Č'ēlēpi K'ēōmiwrčean, keank'ē u gorcunēut'iwnē*, Vienne, 1936.

A.R.A.R.@

— Le jeudi 29 juillet, après une tentative de conciliation sans résultat des révoltés et après la mobilisation qui s'effectue de part et d'autre, les troupes rebelles quittent Constantinople pour Andrinople, tandis que le mufti est exilé.

— Le mardi 10 août les deux armées se retrouvent face à face, tout près de la localité de Baba, et y dressent leur camp.

— Dans la nuit du 10 au 11 août, les janissaires «loyalistes» provoquent un mouvement de panique dans le camp du sultan, puis passent du côté des insurgés, tandis que Mustafa II s'enfuit à Andrinople.

— Le mercredi 11 août au matin les rebelles rentrent à Andrinople, sans qu'on leur oppose de résistance, démettent Mustafa II et plébiscitent son frère Ahmet III (qui règne de 1703 à 1730); peu après le mufti Feyzullah est retrouvé en Roumélie et exécuté quelques jours après par décapitation.

— Le lundi 26 septembre 1703 Ahmet III, fraîchement arrivé d'Andrinople, est couronné dans la mosquée d'Eyoub, à l'extrémité ouest de la Corne d'Or, puis fait son entrée triomphale dans Constantinople, alors que son frère est emprisonné.

Le manuscrit

C'est à partir d'un seul et unique manuscrit, le n° 196, ff 1v°-17v°, du fonds arménien du Cabinet des manuscrits orientaux de la Bibliothèque Nationale de Paris, que nous publions la présente *Chronique*, qui ne semble pas avoir été conservée par ailleurs.

Le colophon (f° 52v°) nous révèle que l'ouvrage a été achevé à Constantinople, en avril 1704, «*par la main de l'indigne clerc Petros*». Il comporte 52 ff sur papier, de format 110×160 mm, et est relié en maroquin brun gaufré à l'orientale. A partir du folio 18r°, on trouve une seconde chronique, du même auteur, consacrée au conflit entre Arméniens et convertis catholiques, au début du XVIIIe siècle, qui ne manque pas, elle-aussi, d'intérêt.

Le manuscrit fut acheté vers 1730 — probablement à Constantinople — et ramené à Paris, dans la Bibliothèque du roi, par la mission de l'abbé Sevin[6].

6. OMONT H., *Missions archéologiques françaises en Orient aux XVIIe et XVIIIe siècles*, Paris, Imp. Nationale, 1902, pp. 1095-1117.

digitised by

Nous publions ce texte en développant les abréviations et en harmonisant la ponctuation. De même, il nous a paru utile d'indiquer en bas de page l'orthographe exacte du manuscript, lorsque nous avons été amené à la corriger. Cependant, en trouvera en caractères romains les nombreuses erreurs d'utilisation de la préposition *ի* (*յ* devant une voyelle), et entre parenthèses les lettres omises et non surmontées d'un signe d'abréviation courant. Dans la traduction, les noms propres arméniens, très rares, sont translittérés d'après le système utilisé dans la Revue des Etudes Arméniennes, tandis que les noms propres et les titres des fonctionnaires et soldats ottomans sont rendus dans leur forme usuelle actuelle.

R. H. KEVORKIAN

Պատմութիւն Օսմանցւոց, որք յարեան 'ի վերայ թագաւորին իւրեանց, եւ հանին զնա 'ի գահէն, վասն մուֆթ-ուն[1], որ եւ սպանին զնա:

Յետ պատերազմելոյ ազգիս յՕսմանցւոց սուլթան Մէհմէտի չորրորդի, յորդւոյ Իպրահիմին, 'ի թուականիս մերոյ Ռ. եւ Ճ. եւ ԼԱ.ին (1682), *յորոյ ակիզբն եղեւ պատերազմիլ ընդ Ճերմանացիս, որք են Ալամանքն, եւ այժմ կոչին Նէմցիք: Եւ յայնմ պատերազմի պատճառէ՝ խռովեցան ընդ յՕսմանցիս այլ եւ յազգն Բօլօնացւոց, Հունաց եւ Վնիժացւոց, միաբանելով ընդ յԱլամանս: Վասն որոյ յարեան եւ նոքա 'ի վերայ Օսմանցւոց իւրաքանչիւր ազգն, եւ առին զքաղաքս տեղիս եւ զքաղաքս, մերձ առ յինքեանս եղելոցն, 'ի յՕսմանցւոց. որ եւ յերկարեցաւ պատերազմն այն՝ իբրեւ զամս ԺԸ* (18): *Եւ ամ յամէ գնային Օսմանցիքն, եւ յաղթեցեալք 'ի նոցանէ յամօթով յետս դառնային, մինչեւ եհաս թուականն Հայոց Ռ.ՃՆԷ* (1698):

Ապա զխաղաղութիւն արարին ընդ միմեանս, 'ի չորրորդումն ամի թագաւորութեան սուլթան Մուսթաֆային, յորդւոյ Մէհէմէտին. քանզի ընդ յերկարումն պատերազմին՝ չորք թագաւորք եղեն փոխեցեալք: Նախ յառաքեցին Օսմանցիքն զդեսպանս առ յազգն յԱլամանաց, սակս խաղաղութեան, եւ ապա 'ի վերոգրեալ յազգացն եկին դեսպանքն 'ի Կոստանդինուպօլիս, առ թագաւորն Օսմանցւոց, 'ի սուլթան Մուսթաֆայն, եւ կռեալ զդաշինս ընդ միմեանս արարին զխաղաղութիւն: Եւ դարձան դեսպանքն զքրիստոնէից՝ իւրաքանչիւրքն փառաւորութեամբ 'ի տեղիս եւ առ թագաւորս (1բ) *իւրեանց: Իսկ*

1. *Մուֆթուն:*

A.R.A.R.@

Օսմանցիքն, զկնի խաղաղութեան, հանդերձ թագաւորաւն իւրեանց՝ գնացին եւ նոքա 'ի քաղաքն Յանդրիանուպոլիս, եւ նստան անդ։

Բայց թագաւորն սուլթան Մուսթաֆայ, 'ի ժամանակի տղայութեան իւրոյ, ունէր ուսուցիչ եւ վարժապետ զպրութեան՝ զոմն Կարնեցի Ֆէյզուլլահ անուն, որ էր փեսայ Վանի Էֆէնտուն։ Եւ 'ի թագաւորելն իւրում՝ առաքեալ եբեր զհօճայն 'ի Կարնոյ եւ տարար իւրն մուֆթի, որ կոչի Շէյխ Յիսլամ։ Եւ զամենայն խորհուրդս՝ ընդ նմա առնէր եւ նմա լսէր, եւ այլոց ոմանք ո՛չ հաւատայր զինքն, բաց 'ի նմանէ։ Եւ զոր ինչ եւ գործէր՝ նորին հրամանաւն եւ նորին խորհրդակցութեամբն գործէր, եւ այլոց խօսից ո՛չ հաւատայր եւ ո՛չ լսէր երբեք։ Վասն որոյ իբրեւ ետես Ֆէյզուլլահ մուֆթին այն, որ Աճէմ Ֆէյզուլլահի գոլով, եթէ հաւատայ թագաւորն յամենայն խօսից իւրոց, այնուհետեւ սկսաւ գողանալ զմիտս նորա, եւ յինքն հանգուցանել խարդողական եւ պատրողական բանիւք. եւ ետս հաճոյանալ մօր թագաւորին եւ հաճել զկամս նորա։ Եւ մերթ առ մերթ երթեւեկութիւն առնելով առ նա եւ խօսակցելով ընդ նմա՝ զնորա միտսն եւս յինքն ծրարէր. նաեւ զամենայն պալատականսն համանգամայն զամենեսեան առ յինքն ձգէր։ Որոյ սակի ասէին իսկ եթէ՝ Հմուտ եւ քաջ գոլ 'ի յարհեստս կախարդութեան, եւ նոքաք որսայր զկամս յայլոց եւ հաճոյանայր նոցա։ Եւ զոմանս կախարդական զեղօք իբրեւ զանասունս առնէր, թափելով 'ի զգայութենէ խելաց եւ 'ի մտաց։ Եւ ինքն յառաջացեալ յամենայն գործս յարքունական, մինչ գրեթէ ամենումք յակնկալութիւն առ նայ հայէր, (2ա) եւ զնմանէ կախեալ կային թագաւորն եւ մայրն իւր, եւ բովանդակ պալատն արքունի։

Որպէս ասէ Տէրն. Ցորժամ զիզօրսն կապէսցէ, եւ ապա զամենայն զտուսն նորա յաւար հարկանիցէ, այսպէս եւ սա՝ նախ զթագաւորն եւ զմայրն կապեաց առ յինքն, եւ ապա սկսաւ զիշխանութիւն նորա յափշտակել։ Իսկ արտաքոյ եղեալ մեծամեծացն, 'ի վէզիր Աղէմէն սկսեալ մինչ 'ի չնչին իշխանութիւնս նոցա զձեռս արձակեալ, վասն զի հրամանաւ նորին 'ի յանկ ելանէր եւ կատարիւր ամենայն իշխանութիւն։ Որ եւ ամենայն դրունք մեծամեծացն յամայի եւ յունայն մնային 'ի գործոյ, քանզի խնդրողք զիշխանութիւնս, զվէզիրութիւնս, զփաշայութիւնս, զդաստաւորութիւնս, զաղայութիւնս եւ զայլ ամենայն գործս իշխանութեան՝ առ դրունս նորա դեգերէին զբազում յաւուրս, բազում աղերսանօք, մանաւանդ բեռնալիր եւ ձեռնալիր կաշառօք, զենարիւք եւ դահեկանօք, այլ եւ զանազան պէսպէս մեծածախ ընծայիւք։ Վասն այնու փառաւորութեամբ լայնացեալ, ստուարացեալ եւ յղփացեալ՝ ելից զամենայն աշխարհս որ ընդ ձեռամբ թագաւորութեան Օսմանցւոց էր, միլքով, մալիքանէով, կալուածովք, աղարակօք եւ չիֆտլիկօք. յամենայն

կողմանսն զձեռս արձակեալ[2] քանտարարէր, յապրէր եւ յափշտակեալ բերէր, եւ զակն իւր յաչահ ոչ յադեցուցանէր: Եւ արդ, վասն յայսմ առաւել յաչահութեան սակի՝ ամենեցուն ատելի լինիւր: Բայց ոչ ոք կարէր զդէմ ունիլ նորա, վասն յերկիւղի թագաւորին: Սակայն անկաւ 'ի (2ր) լեզուս մեծամեծացն եւ ռամկացն կողմանց եւ աշխարհաց, եւ բամբասիւր միշտ յամենայն ուրեք, յայտնի եւ 'ի ծածուկ, ասելով եթէ՝ Ղըզըլպաշ է եւ զօճախս Օսմանցւոց կամի զի ջիջուցանել, քանզի զորս կամի՝ իշխանութեամբ քա(ր)ձրացուցանէ, եւ զորս ոչն կամի՝ զայն արտաքսէ, արտասահման առնելով զնա 'ի տանց եւ 'ի բնակութեանց: Եւ զայլ ոմանս, որք ոչ հնազանդին սմա՝ զնոսա տայ սպանանել, որ եւ զիմրահօր թագաւորին՝ ետ խեղդամահ առնել զնա: Եւ զկնի մեռանելոյն Հուսէին փաշային, որ զխաղաղութիւն արար ընդ քրիստոնեայսն, որ եւ սա վասն խեղդելոյ զիմրահօրն զայն, յոյժ խոցեալ 'ի սիրտ եւ անկեալ 'ի հոգս ցաւագար եղեալ՝ մեռաւ:

Եւ թերեալ 'ի Բարիլօնէ զՏալտապան Մուստաֆայ փաշայն, եւ առեալ զքաղաքս կաշառս 'ի նմանէ՝ եւ արար զնա վէզիր, որ եւ արար զվէզիրութիւն իրրեւ ամիսս գ.: Եւ որպէս 'ի վերոյ ասացաք՝ եթէ զամենայն իշխանութիւնս ըստ կամաց իւրոց վարէր եւ կամ վարել տայր, նոյնպէս եւ վէզիրաց, զոր ինչ հրամայէր սա՝ զայն անյապաղ կատարէին: Եւ եթէ զգործ ինչ իշխանութեան վէզիրն ըստ իւրում հրամանացն առնէր, եւ յորժամ լսէր մուֆթին զայն՝ հրամանաւն իւրով յետս պահանջէր: Վասն որոյ տաղտկացեալ նոյն Տալտապան վէզիրն՝ կամէր զի ապանանիցէր զմուֆթին: Իսկ նայ իրաղացաց եղեալ խորհրդոյ վէզիրին, չարախօսեաց զնա վաղվաղակի առ թագաւորն, եւ ետ սպանանել զնայ: Եւ իբրս այս յայտնի հրապարակաւ հռչակեցաւ առ մեծամեծս եւ առ ռամիկսն, վասն այնորիկ առաւել եւս (3ա) տրտունջ կալան զմանէ, եւ միշտ քրթմնջիւն[3] էր 'ի բերանս այլազգաց, եթէ անմեղ ետ սպանանել զՏալտապան փաշայն: Եւ հանապազ խղճալով զազգս իւրեանց՝ առաղէին եւ ասէին. Ղըզըլպաշս այս կամի զի զհաւատս եւ զկրօնս մեր փոխել եւ ինքն թագաւորել:

Զայս միշտ յամենայն ուրեք ասէին եւ լսէին, ընդ յիրեարս, եւ տրտմեալ ոխային և խորհէին, և իբրեւ զլուիս՝ երկնչէին զցաւս, սպասելով ժամու եւ ժամանակի: Մինչեւ եհաս թուականն Փրկչին մերոյ Ռ.Զ. եւ Գ. (1703) եւ մերս Հայոց Ռ.Շ.Մ.Բ. (1152), եւ Տաճկաց ութնէն Ռ.Շ.ԺԵ. (1115), Յուլիս ամսոյ Զ., զկնի տօնի Պայծառակերպութեան Տեառն մերոյ, յերրորդումն աւուր, օր երեքշաբա-

2. արձագեալ:
3. քրմնջիւն:

A.R.A.R.@

թի։ Մինչդեռ 'ի խաղաղութեան կային ազգն այլազգեաց, 'ի նոյնում օրն յանկարծակի յարեան Ծառայք Թագաւորին, որք կոչին ճէպէճիք, արք լ. (30) կամ խ. (40), ժողովեալ միաբանեցան եւ ելին 'ի Ցաթ մէյտանն կոչեցեալ տեղի, աղաղակելով՝ զուլէֆէ խնդրէին։ Եւ յայսմ ամբոխմանէ երկուցեալ քաղաքացւոցն՝ զչուկայս եւ խանութս իւրեանց կիսախուփս արարին եւ կիսոցն փակեցին իսկ։ Եւ տէկպան պաշին, որ Հաբիմ Օղլի կոչիւր, փութացեալ եւ ետ բանալ զկրպակսն եւ զչուկայսն։ Քանզի, յառաջ քան զայս յաւուրքս ինչ, մինչ ճէպէճիքն գնային 'ի պատերազմ առ Վիրս նաւով, յայնմ աւուր յամբոխ արարին, ասելով. Ոչ գնամք 'ի պատերազմ՝ մինչեւ ոչ առցուք զուլէֆէս մեր։ Եւ յայնմ ամբոխմանէ խանութք փակեցան. եւ հասեալ նոյն Հալիմ Օղլուն, զխանութս ետ քանալ եւ ճէպէճոցն ետ (3ր) զուլէֆէյս նոցա։ Եւ ելից գնոսա 'ի նաւս եւ առաքեաց 'ի վերայ Վրաց 'ի պատերազմ։ Եւ յայժմ գնոյն կամեցաւ առնել։ Բայց սոքա դարձեալ 'ի միւսում օրն յաւելան 'ի նոյն տեղին, եւ միաբանեալ 'ի նոյն գործ, եւ զաղաղակ բարձրեալ թէ զուլէֆէյ խնդրեմք։ Եւ կրկին, 'ի նոյն օրն, խանութապանքն փակեցին զխանութն իւրեանց, եւ տէկպան պաշին հասեալ 'ի շուկայսն՝ հրամայեաց բանալ զպէզէստէնս եւ զխանութսն, եւ ճեպեաց 'ի Ցաթ մէյտան, առ ժողովսն ճէպէճոց, հանդերձ զօրօք իւրովք, եւ ամէն քաղցրութեամբ եւ հանդարտութեամբ թէ՝ Ընդէ՞ր յայսմ վայրի ժողովեալ էք։ Եւ նոքա զաղաղակ բարձեալ վասն ուլէֆէյի, եւ նա յանձն էառ՝ թէ 'ի վաղիւն զզուլէֆէյս ձեր ես ինքն տացից եւ դուք յայժմուս ցրուեալ գնասջիք 'ի տեղիս ձեր։

Եւ դարձեալ 'ի նոցանէ, գնաց առ Ապտուլլահ փաշայն, որ թոռն է Քեօփրուլուն, այլ եւ փեսայ Ֆէյզուլլահ մուֆթիին, եւ էր դարմախամ 'ի Ստամպօլու, եւ էառ զհրաման 'ի նմանէ՝ զի 'ի վաղեան օրն կոտորեսցէ զճէպէճիսն։ Եւ ծանուցեալ զայս ճէպէճոցն զօրաց, առաւել եւս կուտեցան, եւ ընդ յինքեանս առեալ զսօֆթայս, հանդերձ դրօշիւքն նոցա, եւ եկեալ ժողովեցան 'ի հինդշաբաթի առաւօտուն 'ի նոյն (Ց)աթ մէյտանն եւ յամբոխ մեծ արարին, եւ սկսան աղաղակել եւ բարձրացուցանել զձայնս իւրեանց, փոխելով այսօր զբանս իւրեանց, գոչելով ասէին թէ՝ Զթագաւորն եւ զմայրն, զմուֆթին եւ զլէզիրին խնդրեմք, եւ ոչ կամիմք զնոսա այսուհետեւ։ Եւ այնքան սատտիկ գոչելով աղաղակէին՝ Ալլահ, Ալլահ, մինչ զձայնս իւրեանց 'ի յօդս փուէին առհասարակ (4ա) քաղաքաւս. այլ եւ ձայն աղաղակին տարածիւր ընդ յերեսս Ծովուն, քանզի բարձր է (Ց)աթ մէյտան տեղն այն։

Եւ դարձեալ անտի յետս գնացին, աղաղակաւ հանդերձ, 'ի Դուռն արքունական պալատին, եւ անդ խնդրէին զդարմախամ փաշայն,

քանզի անդ փախեալ եւ ամրացեալ էր՝ վասն ահէ նոցին։ Եւ զտին զդրունսն փակեալ, եւ կամեցան խորտակել զդրունսն պալատական եւ մտանել 'ի ներքս. ընդ յոր ընդդէմ կացեալ յոմանց՝ ո՛չ ետուն թոյլ առ 'ի մտանել 'ի ներքս։ Որ եւ մէկհոգէր պաշի ոմն զայմախամին՝ եհար 'ի ճէպէճի զօրացն զոմն եւ սպան զնա անդ. եւ ըմբռնեալ կալան զնայ եւ ածին ընդ ինքեանս։ Եւ ապա ժամանեալ սէկպան պաշին անդ, առ 'ի խաղաղացուցանել զնոսա, ասելով եթէ՝ Ահաւասիկ պատրաստ է քսակքն դրամից, եկայք, ո՛վ ընկերք, երթիցուք, զի տացից ձեզ զուլէֆէյան ձեր։ Եւ նոքա ոչ լուան նմա, այլ ասէին. Մեք զուլէֆէ ո՛չ խնդրեմք։

Եւ յորժամ ետես սէկպան պաշին, զի ոչ երթեք ընդ նմա, եւ զի են զայրագնեցեալք յոյժ եւ յաղմկացեալք, խորհեցաւ զի զանխուլ 'ի նոցանէ՝ սպրդեալ մտցէ 'ի պալատն արքունական, այնու դիտաւորութեամբ զի անդ զարձրացուցցէ ասելով եթէ՝ Ով ոք ես-նիչերի իցէ եւ ծառայ թագաւորին՝ եկեսցէ առ մեզ, զի ներքոյ դրոշին իւրոյ։ Քանզի վաղեմի օրէն է նէնիչարեաց, զստ սահմանին իւրեանց, զի յորժամ ուր ուրեք եւ տեսցեն զդրօշս իւրեանց զարձրացեալ, անդ ճապարեալ[4] փութան, եւ զտեղին ընդ հովանաւ դրօշին իւրեանց։ Վասն որոյ սէկպան պաշին այսր յաղաղաւ հնարելով զայս, զի կամէր անդր (4բ) ժողովել զնէնիչէրիս եւ անդ հրաման զայմախամին ցուցանել նոցա, եւ այնու կոտորել զճէպէճիսն։ Բայց զօրքն ճէպէճոց փրագէտ եղեալ՝ վասն որոյ ոչ ետուն նմա թոյլ զի մտանիցէր 'ի պալատն։

Իբրեւ ետես սէկպան պաշին զի ոչ կարէր զի մտանիցէր 'ի պալատն, յերկիւղիւ լցեալ յոյժ, եւ կամէր փախչել 'ի նոցանէ։ Մանաւանդ զի ետես որ զօրքն իւր ցրուեալք էին, եւ սկսաւ սակաւ առ սակաւ 'ի փախուստ դառնալ։ Եւ յորժամ ծանեան ճէպէճիքն եթէ փախեաւ սէկպան պաշին, իսկոյն փութանակի զկնի ընթացեալք եւ հասեալ կալան զնա մերձ 'ի Պէզէստէն, 'ի խանութ իմն, որ մտեալ էր միայնակ։ Եւ հանին զնա անտի, զկուս 'ի գաց, եւ գտեալ զփակեալ իմն օտար եւ կեղտոտ՝ եդին 'ի գկուսն նորա, եւ հեծուցին զնա 'ի բերնակիր ձիոյ միոյ, եւ վարէին գունութեամբ։ Եւ նայ ողբական բանիւք աղաղակէր, ասելով. Ո՞ւր տանիք զիս. եւ թէ՝ Ողբիք, խընայեցէք 'ի ծերութիւնս իմ եւ ներեցէք ինձ վասն յաչեաց իմոց, եւ մի՛ սպան(ա)նէք զիս, քանզի եւ ինչ գարիս կամիք յինէն՝ անյապաղ զայն արարից ձեզ։ Պատատխանեալ ճէպէճոցն ասեն թէ՝ Մի՛ երկնչիր պապայ, զի ոչ սպանանեմք զքեզ, այլ ե՛կ զի, երթիցուք 'ի Ցաթ[5] մէյտան, զի անդ խօսք ինչ ունիմք ընդ քեզ։ Եւ առեալ տարան զնա

4. ապառնարեալ։

5. Ցէթ։

A.R.A.R.@

բռնութեամբ 'ի Ցաթ[6] մէյտան, որ առ ընթեր կայ Եէնկի օտալարին եէնիչարեաց, որ ասի ասպարէզ մսոյ, զի անդ բաժանեն զմիս Եէնիչարեաց: Անդ զտեղի առեալ զօրացն եւ 'ի միջի առեալ զսէկպան պաշին, եւ շուրջանակի պաշարեալ զնա՝ ամէին ողոքանօք եւ (ճա) քաղցրութեամբ, խնդրելով 'ի նմանէ զհրամանն կոտորմանն իւրեանց եւ զդրօշս եէնիչարեացն: Իսկ նա ուրանայր թէ՝ Ո՛չ է ընդ իս: Այլ եւ այլատարազ խօսիւք յապաղէր եւ կամէր պատրել զնոսա, քանզի ոչ կամէր տալ նոցա, ո՛չ զհրամանն եւ ո՛չ զդրօշն: Եւ նոյն ժամայն զայրացեալ նոցա հարին զնայ աստի եւ անտի, եւ սպանին զնա:

Ապա որոնեալ 'ի վերայ նորա, զտին 'ի ծոցս նորա զհրամանն կոտորման նոցա եւ զերկու դրօշս եէնիչարեաց, եւ առին զնոսա: Եւ զգէչս նորա կապուտ կողոպուտ արարեալ՝ մերկացուցին եւ ձգեցին 'ի խիչտս յորմոյն: Եւ աստանօր բարձրացուցեալ զդրօշս եէնիչարեացն, և մեծաւ բարբառով աղաղակեցին առ հասարակ ասելով. Ով ոք որ եէնիչէրի իցէ եւ եղբայր մեր՝ ժամանեսցէ այսր առ մեզ եւ հասցէ առ դրօշս իւր, եւ զետեղեսցի ընդ հովանեաւ նորա: Եւ իբրեւ լուան զայն բարբառ[7] աղաղակին, զորքն եէնիչարեաց առժամայն ժողովեցան անդ, եւ խառնեցան ընդ զօրս Ճէպէճոց: Եւ խառնեցան 'ի մի վայր եւ նստան 'ի նոյն Ցաթ[8] մէյտանն: Եւ ապա կոչեցին զուլէմայս եւ զխատիս մեծամեծս, զսոֆիթայս 'ի բազմաց մըզկիթաց, եւ զերեւելի արս քաղաքին, զպօստանճի պաշին եւ եէնիչարեաց օճախ աղայսն, զսիփահեաց երկու աղայսն եւ զսէյտս զՊէշտէնիլց, հնոյն եւ նորոյն, զսառամխանայցիսն եւ զամենայն արհեստաւորաց զռայիսն եւ զքեահվիայսն:

Եւ մուռնետիկք աղաղակէին 'ի քաղաքս թէ՝ Ով ոք իցէ տաճիկ, եկեսցէ առ մեզ: Իսկ վերոգրեալ պետքն, զոր ասացաք, ամենեքեան հանդերձ զօրքն իւրեանց զրահաւորեալք՝ անդր ժողովէին օր ըստ յաւուրց՝ հազարք եւ բիւրք: Բայց ոմանք (ճբ) 'ի նոցանէ վասն յերկիւղի նոցին գային անդ, զի մի՛ որպէս զսէկպան պաշին կրեսցեն զպատուհասս եւ սպանցին: Եւ ոմանք ընդ յօժարութեան կամաց իւրեանց ժամանէին առ նոցա եւ միաբանէին: Եւ հարցեալ զօրացն ընդ պօստանճի պաշին վասն զայմախամին. եւ նա ուրացաւ եւ բազում երդմամբք[9] հաղիւ կարացին հաւատարմացուցանել զնոսա եթէ՝ ո՛չ զիտեմ թէ ուրանօր իցէ նա. եւ միաբանեալ եւ նա ընդ նոսա հանդերձ զօրքն:

6. Ցէթ:
7. բառաբառ:
8. էթ:
9. երդմամբ:

digitised by

Իսկ 'ի յուսանալ ուրբաթի յաւուր, գրոհ տընեալ քաղաքն, ամենայն մեծամեծք եւ ռամիկք առ հասարակ, երամ երամ եղեալ ժամանէին 'ի ժողովատեղն նոցա. նաեւ յարտաքոյ քաղաքիս եղեալ կողմանց, այսինքն՝ յեյլիալիւ 'ի Գասբմ Փաշայէ, 'ի Գալաթու Պէկ Օղլով եւ Ճիհանկիրով, եւ առ յԷջան Թօփխանու Ֆնտիկլիով՝ մինչեւ 'ի Պէշիկթաշ, Հին Հիսարով, մինչ 'ի Սարը Եարն եւ մինչեւ 'ի Նոր Հիսարն եղեալ Տաճկունք: Այլ եւ 'ի կողմն Անատոլու, յայն կոյս ծովուն, 'ի Բաղկեդոնէ սկսեալ յՈւսկուտարու առ յեզերք ծովուն, յԻստավրօսու, 'ի Զէնկէլ Բեօյու, յԱնատոլու Հիսարէն, Ղանրը Ճայու, Պէկիզդու, եւ Ղալախու՝ որ է Հիսարն 'ի վերի, 'ի պօղազն պոնտոսական ծովուն՝ որ կոչի Գարայ Տէնիզ պօղազի, գային եւ մտանէին 'ի քաղաքս Ըստամպօլ եւ առաքէին[10] 'ի Ցաթ[11] մէյտան տեղին, իբրեւ զգեստս դարնանային յորդեալ 'ի սատիկ յանձրեւաց, ընուին զասպարէզն զայն լայնանիստ եւ գերկայնաձիկ:

Եւ ապա զխորհուրդ առեալ, հաստատեցին 'ի միջի իւրեանց. աղայ եէնիչէրեաց՝ զԶալզզ Ահմէթ աղայն, եւ վէզ(ցաւ)իր ազէմ՝ զՆիշանճի Ահմէթ[12] փաշայն, եւ մուֆթի՝ զՊաշմախճի Զատէն, որ եւ սա յետ երից յաւուրց հրաժարեցաւ 'ի մուֆթիութենէ, վասն տըկարութեան, եւ ապա եդին մուֆթի՝ զԻպրահիմ էֆէնտին: Եւ փոխեցին զդատաւոր քաղաքիս, մուֆթեղլիէ ասելով, եւ բերեալ զնա յատեանս խրեանց, զի փեսայ էր Ֆէյզուլ(լ)լահ մուֆթուն: Վասն որոյ զբաղում նախատինս եւ զանարգանս տային նմա, ասելով թէ՝ Դու եւս Ղըզըլպաշ ես, քանզի փեսայ ես նորին: Որ եւ կամէին զնա սպանանել եւս: Բայց վ' ձեռն մաղթանաց մեծամեծ ուլէմայից՝ հաղիւ արգելան 'ի սպանանելոյ: Այլ եւ զդատաւորս 'ի գաղում քաղաքաց մանզուլ արարին, այսինքն Երուսաղէմին եւ զԹէսաղինիկոյն, զՊուրսայուն զդատաւորն փարատեցին: Իսկ զդատաւորն 'ի Ստամպօլու, որ փրկեցաւ յ'ի սպանմանէ յառաջի նոցա, արձակեալ զկին իւր, բաղում երդմամբ թէ՝ Այսուհետեւ ո՛չ կալայց զնա ինձ[13] կնութեան, որովհետեւ ծանուցիք[14] ինձ եթէ զուստր իցէ զսուն Ղըզըլպաշի: Եւ յետ երից յաւուրց փախեաւ: Յետ այսորիկ մունետկաւ քարոզ կարգացուցին 'ի բոլոր քաղաքս՝ փակել ամենեւին զխանութս, զչուկայս, զպէզէստէնս, զառաճխանայս եւ զամենայն խանութս արուեստաւորաց, բացի յէքմէքճոց, 'ի մածախից եւ 'ի պախալից: Եւ ամենեքեան յանձն առեալ՝ փակեցան ամենայն խանութք եւ խանք Տաճկաց, Քրիստոնէից եւ Հրէից:

10. արքէին
11. Ցէթ:
12. Ահմէտ:
13. իսձ:
14. ծանուցինք:

A.R.A.R.@

Դարձեալ մունետկաւ պատուիրեցին ո՛չ ելանել արտաքս կանանց եւ մատղաշ մանկանց, եւս չդտանել գինի։ (6բ) Եւ ո՛չ ետուն զսէլայս եւ ո՛չ վճարեցին զուրբաթս իւրեանց, մինչեւ 'ի վեցերորդ ուրբաթն ոչ յիշատակել զանուն Թադաւորին 'ի մզկիթս։ Եւ արարին այնպէս, պատճառելով, եթէ լցէ Թադաւոր՝ եկեսցէ աստ եւ նստցի 'ի գահս իւր, եւ ապա ընդունիցիմք զնա որպէս Թադաւոր եւ յիշեսցուք զանուն նորա 'ի յաղօթս։

Յետ այսորիկ զխորհուրդ առեալ ընտրեցին զարս ոմանս խոհեմս եւ անուանիս, այսինքն զերիս չէյխս եւ զհինգ ուլէմայս, քանի մի էմիրս, եւ զայլս ոմանս 'ի յօճախէ[15] Եէնիչարեաց, իբրեւ զարս խ. (40)։ Եւ ետուն 'ի ձեռս նոցա արզս եւ մահնամս, բազում կնքով, եւ առաքեցին 'ի յԱնդրիանուպոլիս, յանդիման լինիլ Թադաւորին։ Եւ էր պատճէն գրեալ այսպէս. Ինքնակալ Թադաւորիդ մերոյ, ողջոյն[16] եւ երկրպագութիւն մատուցանեմք. եւ զկնի ծանուցանեմք զերրապատ[ւ]ութեան քո, ով Թադաւոր, զի մեք զքո Թադաւորութիւնդ 'ի վերայ մեր կամիմք մինչեւ 'ի վաղճան քո, եւ քնաւ ո՛չ եմք հակառակք քո, այլ հնազանդ մնամք յաւիտեան։ Սակայն զմուֆթին քո այսուհետեւ ո՛չ կամիմք լինիլ մուֆթի, քանզի Ղըզըլպաշ է եւ կախարդ, անօրէն է եւ անիրաւ։ Արդ, մեծաւ աղաչանօք խնդրեմք 'ի քէն՝ զի առաքեսցես զդա առ մեզ, եւ մենք աստ օրինօք եւ իրաւամբք խօսեսցուք ընդ դմա։ Ողջ լեր։

Եւ այսու գրով ելեալ 'ի ճանապար[հ] գնացին։ Եւ հասեալ մերձ էտրէնու, կալաւ զնոսա պօստանճի պաշին եւ էառ զգիրս 'ի ձեռաց նոցա եւ յաքսորեաց զնոսա 'ի Ցէնէգ, յեղերսն Սպիտակ ծովուն, մերձ 'ի Պօղազ Հիսար։ Բանզի հրամանաւ (7ա) մուֆթուն պահէին զճանապարհորդսն՝ զի մի՛ հասցէ քան սոցա առ Թագաւորն։ Եւ զգիրսն զորս կալան՝ տարեալ ետուն ցմուֆթին, եւ նա ծածկեաց զայն 'ի Թագաւորէն։ Եւ դարձեալ հրաման ետ մուֆթին համախոհիցն իւրոց, զի կալցեն զճանապարհորդս եւ որոնեսցեն բռնութեամբ, եւ եթէ զթուղթ ինչ գտցեն՝ զայն փութապէս հասուսցեն առ նա, եւ ահացուսցեն զճանապարհորդսն, զի մի՛ ճշմարիտն զոր տեսին եւ կամ լուան յիստամպօլ՝ զայն խօսեսցին, այլ գաղտեսցեն եւ թաքուսցեն։ Բայց ինքեանք այլ եւ այլ խօսիւք ընուին զանկնչսն ռամկին որ յէտրէնէ, ասելով թէ՝ Բանի փասքուս ճէպէճիք յիստամպօլ զուլֆէ խնդրեան են, եւ վասն այնորիկ կամեցեալ են զիստամպօլ 'ի հուր այրել, եւ մտեալ 'ի տունս յոմանց յաւէշտակեալ են զինչս նոցա։

Եւ արդ մինչեւ ցայս վայր ծածկէին եւ թաքուցանէին զեղեալ յիրս 'ի Թագաւորէն, քանզի ո՛չ ոք փշխէր ծանուցանել նմա, վասն

15· յօճաղէ։
16· ողջուն։

յերկիւղի մուֆթուն։ Սակայն Հասան փաշայ ոմն, որ էր փեսայ թագաւորին եւ ըիքեսպ նորին, զի էր քեռայր, առաքեաց զոմն հաւատարիմ յ'ի սպասաւորաց իւրոց 'ի Կոստանդնուպոլիս, լրտեսել 'ի ծածուկ եւ տեղեկանալ զիրացն եղելոց։ Որ եւ եկեալ 'ի քաղաքս եւ վերահասու եղեալ յամենայն յիրացն, եւ դարձաւ առ առաքիչն իւր եւ պատմեաց նմա ստուգապէս։ Իբրեւ լուաւ Հասան փաշայն զբանն, առժամայն կնոջն իւրոյ, քեռ թագաւորին, ծանոյց զամենայն զեղեալսն յիստամպոլ։ Եւ նա լուեալ եւ պակեալ առչորիւր, քանզի թարց հրաւիրման եւ կոչման թագաւորին վամ մօրն՝ ոչ կարէր գնալ առ նոսա, վասնզի օրէն էր 'ի հնուց 'ի միջի իւրեանց։ Բայց այժմ (7բ) վասն առաւել տապելոյ եւ տագնապելոյ սրտին, ո՛չ կարաց ժուժել, այլ առանց կոչման՝ եղեալ շեշտակի գնաց առ մայրն իւրն։ Եւ նա տեսեալ զդուստրն իւր յանկարծ եկեալ, թարց հրաւիրանաց, յարուցեալ եւ ասէ. Զի՞ մ'գեղ, դուստր իմ, զի այլագունեալ են երեսք քո, եւ զինչ իցեն պատճառ զալստեան, անդէպ ժամանակի։ Իսկ նա լռութեամբ հառաչէր եւ յոգւոց հանելով՝ գացեալ զբերանն ասէ ցմայրն. Ես յառաջագոյն կարծէի եւ կասկածանօք վարանէի որ այսպէս լինելոց էր։ Ասէ մայրն. Զի՞նչ է այդ քան, պատմեա՛ ինձ։ Ասէ աղջիկն ցմայրն. Մինթէ զո՞ւ միայն կաս յէտրէնէ քաղաքս, որ ոչ իցես լուեալ թէ որպիսի խռովութիւն, աղմուկ եւ յամբոխումն եղեալ է յիստամպոլ, եւ օր յաւուր յառաւելու։ Քանզի ահա զօրք մեծաւ եւ պէս պէս պատրաստութեամբ գան՝ առ 'ի կոտորել զմեզ, եւ դուք ասա անհոգացեալ նստիք։ Եւ դարձեալ ասէ աղջիկն. Մինթէ ո՞չ երբեք լուեալ իցես վասն եղելոյ մեծ Վալիտէին, որ Բեօսէմն կոչէր, զի 'ի ժամանակին այնմիկ այսպէս զխռովութիւնս յարուցեալ զօրացն եւ սպանին զնա, եւ յայժմ կարծեմ թէ ըստ նմին սարսի լինելոց է եւ մեզ՝ մինթէ ո՛չ վաղվաղակի խորհիցուք զհնարս, առ 'ի խաղաղացուցանելոյ զնոսա։ Ապա թէ ոչ մեռանելոց եմք ասատանօր ամենեքեանս՝ 'ի ժողովեցեալ զօրացն յայնոցիկ։ Իսկ մայրն իբր ցիք 'ի մեղս եղեալ, ոչինչ գիտելով զասացելոցն 'ի դստերէն։

Եւ յետ այսորիկ ելեալ անտի աղջիկն՝ գիմեաց առ թագաւոր եղբայրն իւր։ Եւ յորժամ տեսս թագաւորն զքոյրն իւր, տրտմեալ եւ տխուր դիմօք, նաեւ առանց կոչման եմուտ առաջի իւր թագ(8ա)կացեալ, եւ ապա հարցնէր զպատճառն։ Եւ նա անկեալ առ յոտս յեղբօրն, լալով, եւ ասաց. Ո՛վ ամենապատիւ թագաւոր, ո՛վ նազելի եւ քաղցրիկ թագաւոր եւ եղբայր իմ, միթէ ո՞չ լուար որ յաւուրս թագաւորութեան քո՝ Յորպիսի յիրս գործեցաւ, յայտնի եւ հրապարակաւ, 'ի քաղաքն յիստամպոլ։ Քանզի ժողովեալք են 'ի մի վայր ամենայն մեծամեծք եւ ռամիկք քաղաքին, եւ եւս զօրքն քո եէնիչէ-

A.R.A.R.@

բիք եւ ճէպէճիք, միաբանեալ նստին 'ի Յաթ[17] մէյտանն եւ փակեալ են զքաղաքն ամենայն, եթէ զպէպէստէնս, եթէ զչուկայս, եւ զրոհ տուեալ բազմաւ պատրաստութեամբ՝ զալոց են ասա առ 'ի կոտորել զքեզ: Ասէ Թագաւորն. Վասն է՞ր պատճառի: Ասէ քոյրն. Վասն հօճային քո, զի ոչ ընդունին զնա այսուհետեւ մուֆթի:

Եւ այսու նման այլովք բազմօք բանիւք խօսեցաւ առաջի եղբօրն, քանզի կարի խոհեմ, ճոռոմաբան եւ համարձակախօս է, ասեն: Եւ զարձեալ կական բարձեալ, արտասուելով ասէր. Արդ, Ո՛վ հզօր եւ մեծ Թագաւոր, մինթէ վասն առն մինոյ անիրաւի կոտորեցի՞մք 'ի զուր եւ ընդունայն ամենայնքս: Ասէ Թագաւորն. Ես զհօճային իմ ո՛չ մատնեմ 'ի ձեռս նոցա: Ասէ քոյրն. Ապա ո՞րպէս շահիս զմիտս յամբոխին եւ խաղաղացուցանել զնոսա: Ասէ Թագաւորն. Զամենայն զնոսա սրոյ ճարակ արարից: Ասէ քոյրն. Մինթէ կոտորի՞ն նոքա, զի յոյժ բազումք են:

Եւ ապա հրամայեաց Թագաւորն կոչել զմայր իւր, եւ ասէ ցմայրն. Ո՛վ մայր իմ, զի՞նչ իցէ բանս այս, զոր խոսի դուստրն քո: Եւ մայրն ուրանայր զիրսն կեղծաւորութեամբ: Եւ ապա հրամայեաց կոչել զթեսայն իւր, զՀասան փաշայն, եւ եհարց ցնա Թագաւորն եւ ասէ. Մինթէ ճշ(8p)մարի՞տ իցէ բանն զոր խօսեցաւ[18] կին քո առաջի իմ: Ասէ ցնա փեսայն. Այո՛, Թագաւոր, ճիշտ է: Ասէ Թագաւորն. Ապա ընդէ՞ր յառաջագոյն ոչ ծանուցիք ինձ: Ասէ փեսայ[ն] Թագաւորին. Վասն յերկիւղի հօճային քո, զի նա միշտ ըստիպէր զմեզ՝ ո՛չ ծանուցանել զայս Թագաւորին:

Եւ յետ յայսոց բանից, եհան զնոսա յերեսաց իւրոց, եւ ապա յետ այսորիկ կոչեալ զվէզիրն իւր, զկոչեցեալն Բամի, եւ ասէ ցնա Թագաւորն. Զի՞նչ իցէ լուրս այս, զորս լուա[յ], ընդէ՞ր խռովեալք են զօրքն որ յիստամպօլ: Ասէ վէզիրն. Այո՛, խռովեալք են եւ յամբոխեալ: Ասէ Թագաւորն. Վասն ո՞յր պատճառի: Ասէ վէզիրն. Վասն հօճային քո: Ասէ Թագաւորն. Եւ ընդէ՞ր յառաջագոյն ոչ ազդ[19] արարեր ինձ զայս: Պատասխանեաց վէզիրն. Վասն յահի հօճա[յ]ին քո, զի նա հրամայեաց մեզ՝ ամենեւին ոչ զեկուցանել զիրս զայս արքային: Ասէ Թագաւորն. Վասն է՞ր նա կամէր զայս ինձ ո՛չ [յ]այտնել: Ասէ վէզիրն. Զի զօրքն քո ո՛չ կամին զնայ մնալ մուֆթի այսուհետեւ: Յայնժամ բարկացեալ Թագաւորն եւ ասէ ցվէզիրն. Ե՛րթ եւ խաղաղացոյ զնոսա: Եւ եհան զնա յերեսաց իւրոց արտաքս:

Յետ որոյ կոչեաց զհօճային իւր, զմուֆթին, եւ ասէ [ց]նա. Ով հօճայ, զի՞նչ իցէ պատճառ խռովութեան յիստամպօլու: Պատաս-

17. Յէթ:
18. խոսեցաւ:
19. ասա:

digitised by

խանի ետ մուֆթին, եւ ասէ. Ո՛վ թագաւոր, նոքա որք յամբոխեալք են եւ խռովեալք, զճուլիսս կամին, այսինքն իջուցանել զքեզ ի թագաւորութեանդ զահէ եւ զայլ ոք թագաւորեցուցանել: Եւ ես ոչ կամելոյ զայս, եւ զֆէթվայ ոչ տալոյ սակին, վասն այն կամին զիս կորուսանել եւ զայլ ոմն առնել մուֆթի, զի ֆէթվայ տացէ նոցա: Ասէ թագաւորն. Իրաւի այդպէս է: Արդ որո՞վ հնարիւք կարիցեմք զնոսա յաղթահա(ցա)րել: Ասէ մուֆթին. Արդ կոչեա՛ զվէզիրն քո, եւ ա՛ռ 'ի նմանէ զմատանին քոյ եւ ես զայլ ոմն արարից քեզ վէզիր, որ վրէժխնդիր լինիցի հպարտութեան նոցա: Այլ եւ տացից զշրամ եւ զֆէթվայ 'ի ձեռս նորա, զի կոտորեսցէ զնոսա ի սպառ: Զայս ասացեալ մուֆթին եւ ել [յ]երեսաց թագաւորին:

Եւ թագաւորն դարձեալ կոչեաց զվէզիրն, ըստ խրատու մուֆթուն, եւ ասէ ցնա. Արդ, տո՛ւր զմատանին իմ ցիս: Առտանօր սրբտապնդեալ վէզիրն եւ համարձակեալ ասաց. Ո՛վ զերամեծար թագաւոր, ահա մատանին քո: Եւ հանեալ 'ի ծոցոյն եցոյց: Բայց արտասուելով ասաց. Ես ծառայ քո, զի թէպէտ զմահս իմ վասն կենաց արքայի հանապազ յանձս առեալ եմ եւ առնում իսկ, սակայն եթէ այժմ տացից զմատանին քո առ քեզ, եւ ելից արտաքս յերեսաց քոց, նոյնժամայն զիս անդամ անդամ կտրատեն: Եւ յետ այնորիկ զքեզ եւս ոչ թողուն կենդանի, եւ ոչ զմայրն քո, եւ ոչ զորդիսն քո, եւ ոչ զազգայինս քո: Արդ, աղաչեմ զքո[յ]ին հեզութիւնդ, ներեա՛ ինձ եւ անսայ ծառայի քո, եւ լուր բանից իմոց, զի մարթասցուք կերպիւ իմիք գտանել զհնար խաղաղութեան խռովութեանս այսմիկ: Եւ արդ, հրամանաւ մեծարգոյ թագաւորութեան քո, առաքեալ բերից զարան զայնոսիկ որք աքսորեցեալք եղեն 'ի Ցէնկզ, եւ Վեհափառութիւն քո ինքնին խօսեաց ընդ նոսա:

Եւ հրաման առեալ վէզիրն 'ի թագաւորէն, եւ դարձոյց զաքսորեալսն, եւ եմոյծ առ թագաւորն, եւ խնդիր արարեալ արդի եւ մահզարի նոցին, եւ գտեալ բերին եւ ետուն ցթագաւորն: Եւ ընթերցեալ ծանեաւ: Եւ հրամայեաց գրել զհրով(գր)արտակ, որ էր այսպէս. Ցետ ողջունիս իմոյ, զայս ծաներուք, զուք որք խռովեալքդ էք եւ զետեղեալ կայք 'ի մի վայր. այժմ հրամայեմ ձեզ զի խաղաղացեալ, դարձջիք 'ի տունս եւ յօթեւանս ձեր, եւ զհօճայն իմ այժմ ինձ չնորհեցէք. եւ մեք, յետ սակաւ յաւուրց, եկեսցուք յԻստամպօլ: Եւ առտանօր, զոր ինչ եւ խնդրիցէք յինէն՝ արարից ձեզ: Ողջ լերուք:

Եւ տուեալ զհրովարտակն եւ արձակեաց զնոսա: Եւ թագաւորն իբրեւ առաքեաց զնոսա 'ի Իստամպօլ, հրամայեաց վէզիրին՝ զի զօրս գրեսցէ, եւ նէֆիրամ արարեալ 'ի յՈւռումէլի, եւ ժողովեսցին առտի եւ անտի զզօրս բաղումս եւ զփաշայս բազումս, եւ լցին զքաղաքն յԻստրէնու: Եւ յառաջ քան զայս, զեահեայ պէկին տուեալ ըզբազում քսակս, զի եկեալ Իստամպօլ՝ նոքօք հաճեսցի զկամս զո-

A.R.A.R.@

բացն։ Իսկ նա հասեալ ՝ի Զօդլու եւ լուեալ զանխոնարհելի զկամս սոցա, եւ յետս դարձաւ։ Եւ իբրեւ հասին առաքեալքն ՝ի Թագաւորէն, հանդերձ հրովարտակօքն, եւ ընթերցան զնոսա յականջս ամբոխին, եւ ո՛չ հաճեցան ՝ի գրեալն, քանզի ծանեան՝ որ կեղծաւորութեամբ եւ խաբէութեամբ էր գրեցեալքն։ Բայց գարձեալ ակն կալեալք մնային յուսով եթէ մինչեւ յուրբաթի օրն եկեսցէ Թագաւորն, որ էր Յուլիսի ԺԶ (16), եւ վճարեսցեն զուրբաթն ՝ի միասին։

Եւ օր ըստ օրէ բազմազան ստօք զնուին զքաղաքս, եւ եւս արհաւրօք բազմօք, զի ոմանք վասն խաղաղութեան խօսէին զսուտն եւ ոմանք վասն խռովութեան։ Եւ այլք՝ թէ գալոց է Թագաւորն ասա. եւ ոմանք՝ թէ ոչ գայ ինքն, այլ զմուֆթին՝ հանդերձ որդւովքն առաքելոց է (10ա) առ նոսա։ Եւ յանցանել ուրբաթուն, եւ ՝ի շաբաթի ՝ի հասարակել յաւուրն, յանկարծակի ե՛լ աղաղակ եւ չփոթումն մեծ յոյժ ՝ի Կոստանդինուպօլիս, եւ զրոհ տուեալ ռամկին՝ աճապարեալ փութային ասա եւ անդ, ժամանել ՝ի հացածախ տեղիս։ Փակեցին զդրունս քաղաքին, ե՛թէ ՝ի ծովու, ե՛թէ ՝ի ցամաքի կողմանցն, թէպէտ յառաջագոյն ՝ի ցամաքի կողմն եղեալ դրունքն պահէին պօստանճիք, հանդերձ զինուք, եւ ոչ թոյլ տային ումեք ելանել քաղաքէն։ Եւ յորժամ պատահէր ննջեցեալքն առ ՝ի Թաղել, զչորս արս եւ զքահանայ մի՝ հրամայէին ելանել ննջեցելովքն արտաքոյ քաղաքին, եւ զայլսն յետս դարձուցանէին։ Իսկ ՝ի յարտաքուստ եկելոց յարանցն ՝ի քաղաքս, խուզեալ որոնէին զնոսա վասն թղթի, եւ առեալ տանէին զնոսա ՝ի Ցաթ[20] մէյտան եւ հարցափորձ լինէին, թէ ուստի՞ գայցէր նա եւ կամ առ ո՞յր երթայր։ Եւ իբրեւ ստուգիւ լուան սոքա եթէ ՝ի յէտրէնէ Թագաւորն զզօրս գրէ եւ զնէֆիրամ հրամայեալ է, եւ զոռճիկս բաշխէ, նա եւս ֆէթֆայս առեալ է ՝ի մուֆթուն, զի առաքեսցէ զզօրս յԻստամպօլ՝ առ ՝ի կոտորել զնոսա մինչեւ ցեօթն տարեկանսն, ապա եւ զոքա եւս սկսան այնուհետեւ գրել զզօրս կեօյուլլիս զսէրտէն կէնտիս, եւ զպետս նոցունց։ Իսկ ՝ի գիր արկեալքն բաժանեալք ՝ի նոցանէ եւ եկեալ բանակօք եւ զինուք ՝ի Եէնիպազար կոչեցեալ տեղին՝ զետեղէին վրանօք։ Եւ օր ըստ օրէ առատանային, եւ նստեալ մնային անդ զաւուրս ինչ, եւ զպատրաստութիւն պատերազմի զնէին զդէնս եւ զսուսերս։

Իսկ ՝ի կիրակի օր, Յուլիսի ԺԸ (18), առաքեալք ՝ի Թագաւորէն (10բ) ոմն իշխանութեամբ իմբահօր, որ եկեալ ՝ի քաղաքս սակս տեղեկանալոյ խռովութեանս, զոր եւ տեսեալ զպատրաստութիւն սոցա եւ զմիաբանութիւն, եւ եղեւ ըմբռնեալ ՝ի սոցանէ, վասն որոյ եւ սոցա պատանդ զերկու որդիսն իւր։ Եւ իբրեւ առին զդրուն, եւ ետուն նմա արդ եւ մահսար եւ առաքեցին առ Թագաւորն, եւ սպա-

20· Ցէթ։

սեալ մնային դառնալոյ նորա 'ի թագաւորէն։ Եւ եղեւ զի յաւուրս յայսոսիկ գայր յԷտրենու ոմն մօլլա՛, փեսայ մուֆթուն, առեալ ղթուղթ դատաւորութեան քաղաքիս։ Եւ լուեալ զաղմուկն որ 'ի քաղաք[ի]ս, 'ի ճանապարհին, եւ անդ 'ի Զիֆտլիկս, զօղեալ թաքեաւ։ Իսկ սոքա իբրեւ իմացեալ զայն տեղի, Ցուլիսի ԻԱ (21), չորեքշաբաթի յերեկոյին, եւ զանխուլ յումեքէ գնացեալ գտին զնա եւ կալեալ կապեալ բերին 'ի գիշերի 'ի քաղաքս եւ եղին 'ի կալանս։

Բայց վերոյ գրեալ իմրահօրն, որ գնաց [առ] թագաւորն, այլ ոչ դարձաւ, այլ առաքեաց զոմն իւրոց սպասաւորացն 'ի Ստամպօլ, առ ժողովս սոցա, հանդերձ թղթովն իւրով, յորում գրեալ էր այսպէս, եթէ՝ զղիրս ձեր մատուցի առ թագաւորն, եւ պատասխանելոյ աստի, զի երբէք ոչ արար արժանի, եւ ոչ ինձ թոյլ ետ ելանելոյ աստի, զի թէպէտ ես ինքնին խոստացայ դառնալ առ ձեզ։ Վասն որոյ ահա առաքեցի զսպասաւորն իմ առ ձեզ, թղթով իմով, ծանուցանել ձեզ։ Եւ ահա երկու որդիքս իմ առ ձեզ են, եւ զոր ինչ կամիք առնել դոցա՝ արասջիք, կամք ձեր եղիցին, քանզի անպարտ եմ առաջի Աստուծոյ, քանզի խարդախութիւն ոչ գոյ յիս։ Ողջ լերուք։ Եւ (11ա) իբրեւ ընթերցան սոքա զգիր իմրահօրին, զորդիս նորին ոչ սպանին[21], բայց առաւել եւս բորբոքեցան 'ի բարկութեան եւ տեսանէին զպատրաստութիւն պատերազմի եւ յելանելոյ 'ի ճանապարհ։

Եւ յորժամ լուան մայրն եւ քոյրն թագաւորին, եթէ ոչ կամին զորքն Ստամպօլու, այլ պատրաստ գոլով գալոց են 'ի պատերազմ, մտին առ թագաւորն, եւ աղաչէին զնա ասելով. Ով թագաւոր, արդ տուր նոցա զհօճայն քո, եւ մի՛ զմեզ 'ի մահ վասն նորա։ Ասէ թագաւորն. Ես ո՛չ տամ զհօճայն իմ 'ի ձեռս նոցա։ Ասէ ցնա մայրն, հանդերձ արտասուելով. Ո՞վ առիւծ որդեակ իմ, ես զիմ մահս եւ զմեռանիլն իմ ոչ հոգամ, զի անցեալ է ժամանակ իմ, եւ ոչ զմահն զմեռանիլն իմ ոչ հոգամ, զի անցեալ է ժամանակ իմ, եւ ոչ զմահն զմեռանիլն իմ ոչ հոգամ իսկ, բայց 'ի վերայ տղայոցն քոց՝ յոյժ աղէկիզեալ տոքո հոգամ իսկ, բայց 'ի վերայ տղայոցն քոց՝ յոյժ աղէկիզեալ տոքո հոգամ իսկ, զի չորի եւ այրի սիրտ իմ, որ որբ մնալոց են եւ առանց այցելութեան. վասն որոյ տո՛ւր զհօճայն քո։ Եւ մինչ մայրն լալով զայս ասէր, յայնժամ անկեալ ցոտս թագաւորին կանայքն եւ որդիքն գոռալով լային։ Եւ ապա հրամայեաց թագաւորն զի 'ի Վառնայ աքսորեսցեն զմուֆթին։

Իսկ մուֆթին փրբեւ եառեալ եթէ հրաման ել 'ի թագաւորէն աքսորիլ 'ի Վառնայ, աղաչեաց զթագաւորն զի հրաման տացէ զի անտի անցանիցէ 'ի Տրապիզոն։ Եւ հրամայեաց զի անտի 'ի Տրապիզոն անց[ց]է։ Եւ ելեալ մուֆթին յԷտրէնու, փութապէս կամէր հասանիլ 'ի Վառնայ, բայց վէզիրն Բամի՝ այլ իմն ֆէրման տուեալ 'ի ձեռս այլոց չաւուշաց, զի 'ի ճանապարհին յամեցուցանելով տարցեն։ Եւ

21. սպանին։

A.R.A.R.@

